ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ*

Կատերինա Ալթունյան

Բանալի բառեր՝ էլիտայի շրջապտույտ, արդիականացում, ժողովրդավարական անցում, իրավահաջորդություն, քաղաքական համակարգ, իշխանափոխություն, ժողովրդական շարժում, քաղաքական մրցակցություն:

Աշխարհայացքի և գիտակցականի որակական էվոլյուցիան էականորեն փոխել են ժողովրդավարության ու արդիականացման դեմքն աշխարհում: Կյանքի հրամայականները սնուցող միջավայր են ստեղծում նոր տեսակի հասարակությունների և դրանց էլիտաների ձևավորման համար, ընդ որում, այդ գործընթացները չեն կորցնում իրենց ցիկլիկ կամ շրջափուլային բնույթը: Ժողովրդավարացման փուլերի հարացույցն, այդ իմաստով, սահմանում է, որ վեկտորային քաղաքական արդիականացումն անցումային պետություններում բախվում է նոր խնդիրների, և գործընթացի անընդհատությունն ապահովելու տեսանկյունից առավել հրատապ է դառնում ժողովրդավարական ինստիտուտների և գործընթացների թափանցիկությունը, իշխանության մոտ քաղաքական ուժերի փոխատեղությունը և համամարդկային արժեքների գերակայությունը: Ժողովրդավարական անցման հիմքը՝ ընթացակարգային ինստիտուցիոնալացման միջոցով, քաղաքական իշխանության օրինական ու լեգիտիմ ***փոխատեղությունը*** *կամ* ***շրջապտույտն*** *է: Շրջապտույտի ժողովրդավարական լինելու պահանջը հիմնավորվում է նախևառաջ էլիտայի՝ իր սոցիալական ու կառավարչական գործառույթներն արդյունավետ իրականացնելու, ապա՝ նաև քաղաքական առաջնորդության լեգիտիմություն ունենալու անհրաժեշտությամբ [1]: Այդ կերպ, իշխանության ղեկի մոտ էլիտաների շրջապտույտն ընկալվում է որպես քաղաքական արդիականացման հիմնարար պայման:*

Պետության ու հասարակության արդիականացման իրար հաջորդող փուլերին բնորոշ էլիտայի ձևավորման և կառավարման պրակտիկաների, վերհանված օրինաչափությունների մասին գրել են էլիտաների տեսության դասականներն՝ ի դեմս ***Վ.Պարետոյի***, ***Գ.Մոսկայի***, ***Ռ.Միխելսի*** *[2]: Շրջապտույտի ներքո տեսաբաններն ուսումնասիրել են էլիտայի ձևավորման, զարգացման ու կազմալուծման պատմաքաղաքական գործոնները, շրջապտույտին բնորոշ ընդհանուր և ազգային առանձնահատկությունները՝ հաստատելով, որ էլիտան հասարակության զարգացման կոնկրետ շրջափուլի ծնունդ է: Հասարակական և քաղաքական գործընթացների հարափոփոխության մեջ «շրջապտույտ» եզրը որոշակիորեն ձևափոխվել է (մոդիֆիկացվել), սակայն իր հիմնական իմաստը չի կորցրել: Հասկանալու համար, թե ինչ ձևափոխումների է այն ենթարկվել, անդրադառնանք նախ էլիտայի սահմանմանը:*

Անցումային հասարակություններում էլիտայի գործունակությունը (ֆունկցիոնալությունը), որպես կանոն, կապում են բացառապես անձերի և նրանց անհատական կամքի ու աշխատանքի հետ: Հանրային նման գիտակցությունը քաղաքագետ ***Խ.Լինցը*** *հատկանշական է համարում հայրիշխանական սկզբունքով կառավարման ձև ունեցող պետություններին [3]: Դրանցում էլիտայի շրջապտույտը ոչ այլինչ է, քան մեկ անձի կամ մարդկանց խմբի շուրջ իշխանության խճանկարի կառուցման գործընթաց: Շրջապտույտի վերաբերյալ նման ընկալումից ձերբազատվել, ինչպես ցույց տվեց նաև*

---

* Հոդվածն ընդունվել է 08.09.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 13.09.21:

խորհրդային պետությունների փորձի ուսումնասիրությունը, չի հաջողվել կամ հաջողվել է մասամբ: Մի շարք դեպքերում, սահմանադրորեն ամրագրելով հանդերձ, որ իշխանության աղբյուրը ժողովուրդն է, քաղաքական էլիտայի շրջապտույտն արժևորվել ու արժևորվում է անձնավորված քաղաքական պայքարի ու հիմնական քաղաքական խաղացողների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների տիրույթում: Մինչդեռ, Խ.Լինցի խոսքերով, շրջապտույտը պետք է արժևորվի քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ դիզայնի և ինստիտուտների կայացվածության մակարդակով: Այդ իմաստով, քաղաքագետն առավել ժողովրդավարական է համարում խորհրդարանական կառավարման համակարգը, որը, գուցե, չի երաշխավորում ապանձնավորված իշխանական խճանկար, սակայն խթանում է քաղաքական էլիտաների լեգալացման գործընթացը, քաղաքական կուսակցությունների կայացումը:

Քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ թույլ հիմքը, ինստիտուտների՝ հանրային փոփոխություններին անհամարժեք արդիականացումը, էլիտայի ներսում դանդաղ սերնդափոխությունն անցումային ժողովրդավարության հայեցակարգում քաղաքական էլիտայի շրջապտույտի ոչ օբյեկտիվ կամ ընդհատվածության հիմնական պատճառներն են: Շրջապտույտն, այդ իմաստով, վերածվում է ղեկավար պաշտոնների համար փոքրաթիվ մարդկանց հավաքագրելու և համալրելու փակ գործընթացի: Առաջնորդվելով «Ճիշտ մարդ՝ ճիշտ տեղում» կարգախոսով՝ անցումային քաղաքական համակարգերը, որպես կանոն, համալրվում են սոցիալական նույն միջավայրին պատկանող, անհատական նվիրվածության սկզբունքով գործող անհատներով: Զուգահեռաբար, հանրային պահանջմունքների ու տարվող քաղաքականության անհամապատասխանության, էլիտա-հասարակություն կապի լուրջ խզումների առաջացման պարագայում անխուսափելի է դառնում համակարգային ճգնաժամը: Հետխորհրդային էլիտաների ուսումնասիրություններով զբաղվող ռուս հեղինակ Գ.Կ.Աշինն այս առումով նկատել է, որ վերը նշված հատկանիշների հիման վրա ձևավորվում է ընդհանուր, սակայն նեղ խմբային շահերի վրա ձևավորված քաղաքական ուժի կամ մի քանի ուժերի գերիշխանություն, և տեղի է ունենում էլիտայի վերարտադրություն [4]: Քաղաքական էլիտայի «շրջապտույտի» այսպիսի տրամաբանությունն, իր հերթին, ժամանակ առ ժամանակ տանում է քաղաքական համակարգը լոկալ ցնցումների:

Շարունակելով ժողովրդավարական անցման պայմաններում հետխորհրդային փորձի առանձնահատկությունները պայմանավորող պատճառների ուսումնասիրությունն՝ այժմ անդրադառնանք քաղաքական էլիտայի շրջապտույտի վերլուծության ևս մի կարևոր առանցքի: Վերջինը վերաբերում է պայմանականորեն կոչված «հին» և «նոր» էլիտաների (կամ իշխանության մոտ «նախորդ» և «հաջորդ» էլիտաների) միջև կապերին: Սույն համատեքստում, ամերիկացի հասարակագետ ու քաղաքագետ ***Ս.Հանթինգտոնը*** *ժողովրդավարական անցման համար երկու հիմնարար պայմաններ է առանձնացնում: Եվ ասպես, առաջին պայմանն այն է, որ վարչակարգի ժողովրդավարացման և արդիականացման հետ անհամատեղելի է, երբ նոր քաղաքական էլիտան ձևավորվում է առանց տրոհվելու նախորդ քաղաքական էլիտայից կամ մնում է դրա հետ սերտաճած: Եթե, այնուամենայնիվ, նոր քաղաքական էլիտան ձևավորվում է նախորդի հետ սերտաճման պայմաններում, ապա շրջապտույտի փոխարեն տեղի է ունենում հին էլիտայի «անձնական ընտրության» սկզբունքով իրավահաջորդություն: Երկրորդ պայմանն այն է, որ անցման ընթացքում նոր էլիտան քաղաքական խաղի կանոններն ամրապնդող ժողովրդավարական ինստիտուտներ է ստեղծում՝ երաշխավորելով դրանց լիարժեք գործառնությունը [5]: Առաջին հայացքից պարզ թվացող այս երկու պայմանները փորձենք խորությամբ հասկանալ: Խորհրդային քաղաքական մշակույթում, որ փաստում են հատկապես արևմտյան փորձագետներն ու քաղաքագետները, իրավահաջորդությունն, ի սկզբանե, եղել է իշխանության փոխանցման ոչ բարդ գործընթաց՝ հաշվի առնելով միակուսակցական համակարգի տրամաբանությունը: Հե-*

տագայում այդ գործընթացն իներցիայով, որոշ փոփոխություններով, պահպանվեց հետխորհրդային տարածքում անկախություն ստացած պետություններում, հատկապես նրանցում, որտեղ հաստատվեց նախագահական կառավարման ձևը: Փաստացի, նախագահի դեմքով անձնավորված իշխանությունն առավել մեծ ազդեցություն է ունեցել քաղաքական էլիտայի ձևավորման վրա, քան ինքնին քաղաքական համակարգը: Հին էլիտայի հիմքերի վրա պարտադրվել են նոր ինստիտուտներ՝ փորձելով նոր բովանդակությամբ լցնել դրանք, ինչը հանգեցրել է անհամապատասխանության և անկայունության ամբողջ պետական համակարգի գործունեության մեջ: Այդ կերպ, քաղաքական էլիտան մշտապես վերարտադրվել է: Բավական է նշել Ուկրաինայի, Վրաստանի օրինակները [6]: Ինչևէ, քաղաքական համակարգում իրավահաջորդությունը կարող է նաև չհիմնվել հին էլիտայի «անձնական ընտրության» սկզբունքով քաղաքական էլիտայի ձևավորման պրակտիկայի վրա, որի հնարավորության մասին է փաստում մերօրյա կոմունիստական էլիտան Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում (ՉԺՀ): Եվ այսպես, ՉԺՀ գործող ղեկավար Սի Ցզինպինը համարվում է իր նախորդի իրավահաջորդն այն տրամաբանության մեջ, որ բառացիորեն շարունակում կամ հետևում է իր իրավանախորդին՝ Հու Ցզին Տաոյին, սակայն վերջինիս «անձնական ընտրությունը» չէ: Հու Ցզին Տաոն և Սի Ցզինպինը թեև նույն իշխող ինստիտուտի՝ կոմունիստական կուսակցության շարքերից են, այդուհանդերձ, սերում են միանգամայն տարբեր քաղաքական էլիտար խմբերից (Ցզինպինը ոչ պաշտոնական «հինգերորդ սերնդի» էլիտայի անդամ է) [7]: ՉԺՀ առանձնահատկությունն այն է, որ քաղաքական համակարգում իրավահաջորդությունն ունի ինստիտուցիոնալ բնույթ և միևնույն ժամանակ դրսևորվում է ոչ պաշտոնական էլիտար խմբերի կամ խմբավորումների միջև մրցակցությամբ: Ինչպես տեսնում ենք, բոլոր դեպքերում ակներև է, որ անհատականացված քաղաքական համակարգում իրավահաջորդությունը կոչված է ապահովելու, առաջին հերթին, իշխանության ուղղահայացը: Այդ է պատճառը, որ անցումային երկրներում կարող են գործարկվել այդ ուղղահայացը պահելու բազմաթիվ կառուցակարգեր, սակայն դրանք բավարար չեն քաղաքական էլիտայի շրջապտույտ ապահովելու համար:

Ամերիկյան և արևմտաեվրոպական քաղաքագիտական խոսույթում «իրավահաջորդություն» եզրը բովանդակային առումով տարբերվում է [8]: Քննարկենք ԱՄՆ օրինակով. Հանրապետական նախկին նախագահ Դ.Թրամփը դեմոկրատ նախագահ Բ.Օբամայի իրավահաջորդն էր (անգլերեն թարգմանաբար՝ successor): Օբյեկտիվորեն պետք է նշել, որ երկուսն էլ որոշ չափով շարունակել են իրենց նախորդների քաղաքականությունը՝ հիմք ընդունելով ԱՄՆ ռազմավարական առաջնահերթությունները: Այդուհանդերձ, երկու նախագահներն էլ տարբերվել են քաղաքականության իրականացման ծրագրերով, մոտեցումներով, իսկ նրանց միջև անձնական կապերի և անձնական ընտրության սկզբունքի կիրառման մասին առհասարակ տեղին չէ քննարկում ծավալելը: Նույնիսկ նույն կուսակցական պատկանելություն ունեցող նախագահների իրավահաջորդության դեպքում, որպեսզի գործընթացը չդիտվի իբրև իշխանության պարզ փոխանցում, յուրաքանչյուր հաջորդ նախագահը ձևավորում և իր հետ իշխանության է բերում սեփական թիմը: Համեմատական քաղաքագիտության պրոֆեսոր ***Լ.Հելման*** *ընդգծում է, որ սեփական թիմ ձևավորելու հանգամանքը առանցքային նշանակություն է ստանում իրավահաջորդության համատեքստում և թույլ է տալիս պնդել, որ նախորդ ու հաջորդ նախագահների նույն կուսակցական պատկանելությունն ունենալու դեպքում անգամ տեղի է ունենում քաղաքական էլիտայի շրջապտույտ: Ավելին, հեղինակներ* ***Ֆ.Բյանդերն*** *ու* ***Փ.դը Հարթը*** *համոզված են, որ քաղաքական էլիտայի շրջապտույտը երաշխավորում է նաև որոշում ընդունող առաջնային սուբյեկտը, որպիսին ԱՄՆ-ում համարվել ու համարվում է հանրությունը [9]: Եվ ուրեմն, կայացած ժողովրդավարական համակարգերում իշխանության իրավահաջորդության խնդիրը*

հանգում է գործունակ պետության ապահովմանն ու ժողովրդավարական ինստիտուտների անշրջելիությանը:

Նշվածով հանդերձ, իրավահաջորդության տեսանկյունից անցումային և ժողովրդավարական վարչակարգերով երկրների տարանջատումը պայմանավորված է ոչ միայն եզրույթի բովանդակային տարբերություններով, այլ նաև քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ ու ընթացակարգային կառուցակարգերի կենսունակությամբ և գործունակությամբ: Ժողովրդավարական անցման հարացույցում ***Տ.Կարոզերսը*** *առանձնակի արժևորում է ընտրությունների դերը՝ անվանելով այն արդիականացման առանցքային տարր: Ընտրություններն իրենց գործառույթը կատարում են, եթե կարողանում են կայուն և անցնցում եղանակով ապահովել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխություն [10]: Չնսեմացնելով ընտրությունների դերը քաղաքական էլիտայի շրջապտույտի իրականացման տեսանկյունից՝ այնուամենայնիվ, այսօր առավել արդիականություն է ստանում Ֆ.Բյանդերի ու Փ.դը Հարթի առաջ քաշած «****իրավահաջորդության ճոճանակի****» գաղափարը: Վերջինի տրամաբանության համաձայն, արդիականացման առանցքային տարր է սոցիալական ու քաղաքական գործընթացների ռիթմը, որ դրսևորվում է հանրային տրամադրություններում և պայմանավորում առաջնորդության ու քաղաքական ծրագրերի հաջողությունը: Վերոնշյալից ակներև է դառնում, որ քաղաքական էլիտայի շրջապտույտն արդիականացման գործոն է դառնում այն ժամանակ, երբ քաղաքական իշխանության իրավահաջորդությունը դիտարկվում է որպես անցում, այլ ոչ թե իշխանության փոխանցում կամ վերարտադրություն:*

Անցումային քաղաքական համակարգերում ժողովրդավարության երրորդ ալիքի տարածմանը զուգընթաց, իսկ այսօր առավել քան երբևէ, քաղաքական խոսույթում շրջանառվում է այն հարցադրումը, թե ով է քաղաքական էլիտայի փոփոխության վերաբերյալ որոշում կայացնող առաջնային սուբյեկտը: Քաղաքագիտական դասագրքերից հայտնի է, որ քաղաքական էլիտայի կամ առաջնորդի փոփոխության խնդիրն ինքնին քաղաքական որոշում է, իսկ առաջնային սուբյեկտի դերում կարող են լինել ինչպես ժողովուրդը՝ որպես հավաքական մարմին, այնպես էլ առանձին էլիտան: Անցումային համակարգերում, ինչպես նկատել է ***Մ.Մաքֆոլը****, ժողովրդի իրական սուբյեկտայնությունն անտեսվում է, քանի որ դրանցում չի կայացել ժողովրդավարական անցման պակտի մոդելը, փոխարենը գործում է հակասության ուժային լուծման տարբերակը [11]: Պակտի բացակայության պայմաններում էլիտան՝ որպես որոշում կայացնող առաջնային սուբյեկտ, վերևից խաղի կանոններ է թելադրում ստորին մակարդակի քաղաքական դերակատարներին ու հասարակությանը, ինչի արդյունքում հաստատվում է ավտորիտար վարչակարգ: Էլիտայի՝ որոշում կայացնող առաջնային սուբյեկտ լինելու հանգամանքն, այդուհանդերձ, մի շարք հեղինակներ փաստում են նաև կայացած ժողովրդավարական երկրներում, միայն մի տարբերությամբ, որ դրանցում էլիտայի շրջապտույտն իրականացվում է ժողովրդական լեգիտիմության գերակայության հիման վրա [12]: Հատկանշական է, որ նրանք, ովքեր քաղաքական էլիտայի շրջապտույտը դիտարկում են որպես խորքային բովանդակություն ունեցող գործընթաց, պնդում են, թե նույնիսկ ժողովրդական հեղափոխության ալիքի կամ շարժման դեպքում որոշում կայացնող առաջնային սուբյեկտի դերում է հանդես գալիս էլիտան, այլ ոչ թե ժողովուրդը [13]: Հիմնավորվում է, որ ժողովուրդն ունենում է ընթացակարգային մասնակցություն որոշման կայացմանը, սակայն չի բացառվում, որ ընթացքում կարող են կիրառվել հանրային ընտրության վրա ազդելու բազմաթիվ տեխնոլոգիաներ: Հակադրվելով այս մտքին՝ Մ.Մաքֆոլը նշում է, որ եթե էլիտան ունի «ներքևների» աջակցությունը և առաջարկում է արմատական բարեփոխումներ, ապա այդ դեպքում բացվում է ժողովրդավարացման իրական հեռանկար [14]: Ճիշտ է հասարակական-քաղաքական շարժումների ակտիվացման և քաղաքական դերակատարների ազդեցության նվազմանը զուգահեռ քաղաքական էլիտայի ձևավորման գործընթացը դուրս է մնում ինստիտուցիոնալ շրջանակից, այդուհանդերձ,*

դա չի նշանակում, ըստ Մ. Մաքֆոլի, որ հեղափոխությունը չի կարող բերել քաղաքական էլիտայի շրջապտույտի: Այդուհանդերձ, համարե՞լ հեղափոխությունը ժողովրդավարական համախմբման սկիզբ, թե՝ ոչ: Ժողովրդավարական համախմբումը անցման այն վճռորոշ փուլն է, երբ կառավարման մենիշխանական ձևից անցում է կատարվում ժողովրդավարականին՝ նախորդ վարչակարգի հետ կապի վճռական խզումից հետո: Այդ վճռորոշ փուլին անցնելու կարևոր պայմաններից է ոչ միայն իրավանախորդի հետ կապի կամ սերտաճման վճռական խզումը, այլ նաև ժողովրդավարական ինստիտուտների հետագա գործառնության հուսալիությունը:

Հայ քաղաքական էլիտայի ծագման և ձևավորման պատմաքաղաքական փուլերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև գործոնային վերլուծությամբ վեր հանեցինք, որ էլիտայի շրջապտույտի խնդիրն էապես պայմանավորել է պետության ժողովրդավարացման ու քաղաքական արդիականացման ընթացքը: XX-րդ դարի վերջին, անցնելով քաղաքական արդիականացման նոր ուղու, Հայաստանի նորանկախ Հանրապետությունն ու նորաստեղծ քաղաքական էլիտան թեև ստանձնեցին կայուն և ժողովրդավարական արժեքներով քաղաքական համակարգ ստեղծելու պատասխանատվություն, այդուհանդերձ, անցումն ավարտված համարել դեռ վաղ է: Պետության և ազգային ոգու արդիականացման ձգտումը մինչ օրս մնում է որպես ռազմավարական նպատակ: Ինստիտուցիոնալ քաղաքական համակարգ հաստատելուն ուղղված քաղաքականության ընդհատումները, իշխանության ձևավորման խորհրդային համակարգի իներցիայի պահպանումը, էլիտայի ձևավորման ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ) կառուցակարգերի գործարկումը բացասական ազդեցություն ունեցան ժողովրդավարական համախմբման գործընթացի արդյունքների և վերջնական հաջողության վրա: Ավելին, անկախության շուրջ երեք տասնամյակների ընթացքում Հայաստանում իշխող քաղաքական էլիտայի կառավարման ընթացքում գրանցվել է աղքատության բարձր տոկոս (53.3%) [15], տնտեսական ճգնաժամեր, կուտակվել են խոշոր պետական պարտքեր [16], որոնք կյանքի որակը բնութագրող այլ ազգային ցուցանիշների հետ փաստում են առնվազն քաղաքական էլիտայի կողմից իր գործառույթներն արդյունավետ չկատարելու իրողությունը: Հնարավոր է, որ վերոնշյալ խնդիրների առաջացման օբյեկտիվ հանգամանքներ ևս եղել են: Բացասականն այն է, որ պետականաշինության ինստիտուցիոնալ հիմքերը ևս մնում են խարխլված, որովհետև լավ կառավարելու, ժողովրդի կարիքներին ծառայելու տեսանկյունից քաղաքական էլիտան չի ստեղծել կայուն ինստիտուտներ: Այդ կերպ, հայրենական քաղաքագիտական մտքում քաղաքական էլիտայի ձևավորումն ու կառավարումը սահմանվել է բացառապես իբրև էլիտայի ներսում շահավետ կապերի և հարաբերությունների ստեղծման բուրգի կառուցում [17]: Ընդ որում, քաղաքական էլիտայի շրջապտույտի դե ֆակտո բացակայության մասին է փաստում նաև այսպես կոչված «արդյունավետ մարդկանց» սովը քաղաքական էլիտայում, որը մշտապես փորձ է արվել լուծել կառավարության կազմը փոխելու կառուցակարգով, հատկապես ընտրություններից առաջ:

Հայաստանում ևս հասարակության ու պետության կազմակերպման հայրիշխանական ձևից անցումը ժողովրդավարական համակարգի նշանավորվել է անձնական իշխանության ամրապնդման մշակույթով: Կոմունիստական հասարակության և պետական կազմակերպման խորհրդային ձևը ժառանգություն ստացած մյուս հետխորհրդային պետությունների նման, հայ քաղաքական էլիտայի շրջապտույտն արգելակող ինստիտուտն անձնավորված իշխանության ուղղահայացի ստեղծումը դարձավ՝ քաղաքական սոցիալիզացիայի բացակայության պայմաններում: Իշխող քաղաքական էլիտան ներկազմակերպական կառուցակարգերի միջոցով (ինչպես օրինակ՝ սահմանադրական փոփոխություններ նախաձեռնելն է) կարողացավ մանևրել՝ փորձելով դառնալ հասարակական տարբեր շերտերի համար գրավիչ: Քաղաքագիտական պրակտիկայում այդ մարտավարությունը վերցվել է հավանաբար «քաղաքակիրթ հեգեմոնիայի» մասին կոնցեպ-

տից, որն, ի դեպ, լայնորեն կիրառել է իր աշխատանքներում իտալական կոմունիզմի կնքահայր Անտոնիա Գրամշին [18]: Վերջինս համարում էր, որ «քաղաքակիրթ հեգեմոնիայի» պայմաններում ներկազմակերպական կառուցակարգերով հնարավոր է քաղաքական էլիտայի շրջապտույտ՝ դիտարկելով այն քաղաքական արդիականացման գործոն: Անկախությունից հետո ձևավորված հայաստանյան իշխանության խճանկարն, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ նման սցենարով կառավարումը ավելի շատ գործող էլիտայի իշխանությունը երկարացնելու, քան քաղաքական արդիականացման կամ համակարգի ժողովրդավարացման նպատակին է ծառայել:

Անկախության առաջին երկու տասնամյակների ընթացքում ընտրությունների միջոցով հնարավոր չի եղել քաղաքական էլիտայի շրջապտույտը: Դրան չի նպաստել նախևառաջ ընտրական օրենսգիրքն ու օրենսդրությունը, որոնք դեռ 1990-ականների կեսերից մշտապես փոփոխվել են: Գրեթե բոլոր ընտրությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտրական գործընթացի ընթացքում գերակայել են հիմնականում հեղինակության և ազդեցության ոչ պաշտոնական կառուցակարգերը՝ հետին պլան մղելով ծրագրային և գաղափարական մրցակցությունը: Փաստելու համար բավական է վերցնել ընտրացուցակների կազմման պրակտիկան Հայաստանում: 1999 թվականից օրենսդրությունը սահմանել է ընտրացուցակների երկու ձև՝ մեծամասնական և համամասնական (2016 թվականի դրությամբ): Այդ ցուցակների միջև համամասնությունը 1999 թվականին կազմել են համապատասխանաբար 75/56: Աժ երրորդ գումարման ընտրություններին արդեն այդ համամասնությունը փոխվեց (75՝ համամասնական, 56՝ մեծամասնական): 2007 թվականին չորրորդ գումարման Ազգային ժողովը ձևավորվեց համապատասխանաբար 90 համամասնական և 41 մեծամասնական ընտրակարգով, ինչը նաև միջազգային հանրության կողմից 2003 թվականի խորհրդարանական ընտրությունների ժողովրդավարական չլինելու կոշտ ու բացասական գնահատականներով և 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով էր պայմանավորված: Ընտրացուցակների կազմման տրամաբանության համաձայն, հեղինակություն և ազդեցություն ունեցող անձանց կուսակցություններն առաջադրել են երկու ցուցակներով էլ, որպեսզի երկուսով անցնելու դեպքում, թեկնածուն հնարավորություն ունենար հրաժարվել համամասնական ցուցակի իր մանդատից՝ զիջելով այն կուսակցական ցուցակի հաջորդ համարին, ով պակաս հեղինակություն ունենալու պատճառով կարող էր չհաղթահարել անցողիկ շեմը: Ի դեպ, Հայաստանի խորհրդարանական ընտրությունների պրակտիկայում շատ են եղել ինքնաբացարկ հայտարարած թեկնածուների օրինակները: Ըստ այդմ, գործընթացի սուբյեկտայնությունը ստանձնել է մշտապես էլիտան կամ նրանց հետ փոխկապված խմբավորումները, որոնք էլ քաղաքական էլիտայի շրջապտույտը շրջանցող բազմաթիվ տեխնոլոգիաներ են կիրառել: 2017 թվականի ապրիլի 2-ին տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են համամասնական ընտրակարգով՝ հաշվի առնելով նախորդ ընտրակարգերի թերություններն ու խնդիրները:

2018 թվականին ծավալված քաղաքական գործընթացների ընթացքում ժողովուրդը ստանձնեց քաղաքական էլիտայի ձևավորման առաջնային սուբյեկտի դերը: Ժողովրդական շարժման մեկնարկով, որի սկիզբը գնում է դեռ 2008 թվականին ծավալված հետընտրական իրադարձությունները, ապա 2014 թվականի՝ «Դեմ եմ», 2015 թվականի՝ «Էլեկտրիկ Երևան» քաղաքացիական նախաձեռնություններն ու 2016 թվականի՝ ՊՊԾ գնդի գրավման դեպքը, շրջադարձային փուլ սկսվեց հասարակության ընդերքում ձևավորված արդիականացման նկատմամբ հանրային պահանջի բարձրացման համար: Երկամյա քաղաքական գործընթացներից հետո տեղի ունեցած քաղաքական էլիտայի շրջապտույտի արդյունքում ընդդիմադիր քաղաքական ուժը ստանձնեց իշխանությունը: Մեկ տարի առաջ անցկացված խորհրդարանական ընտրություններից հետո ձևավորված խորհրդարանական քաղաքական ուժերի կոալիցիան փլուզվեց, իսկ նոր ձևավոր-

ված անցումային կառավարությունը գործեց մինչև արտահերթ խորհրդարանական ընտրությունները: Քաղաքական էլիտայի շրջապտույտը, փաստացի, տեղի ունեցավ հեղափոխական ճանապարհով, սակայն լեգալացվեց արտահերթ խորհրդարանական ընտրություններով, որով Հայաստանը թևակոխեց քաղաքական արդիականացման նոր փուլ: Հին քաղաքական էլիտան ընդունեց իր պարտությունն ընտրություններում և չվիճարկեց ընտրությունների արդյունքները: Գործընթացների խորքային ուսումնասիրության արդյունքում հանգում ենք, որ 1988 թվականից սկսած ազատականացման փուլից բուն ժողովրդավարական անցումը խոչընդոտող գործոններից մեկը եղել է քաղաքական էլիտայի տարբեր հատվածների կողմից իշխանությունը ցանկացած գնով ձեռք բերելու, այն պահելու և ամրապնդելու ձգտումը: Ժողովրդավարական անցումը և քաղաքական արդիականացումը դանդաղեցնող կամ փաստացի խոչընդոտող տնտեսական, քաղաքական ու ինստիտուցիոնալ գործոնների հետ մեկտեղ, ձգձգվող անցման ընթացքում քաղաքական էլիտայի շրջապտույտի բացակայությունը հանգեցրեցին անորակ ժողովրդավարության հաստատմանը Հայաստանում: Անցումային ժողովրդավարական համակարգ ունեցող բազում այլ պետությունների փորձը հաշվի առնելու հետ մեկտեղ, Հայաստանում ծավալված քաղաքական գործընթացները ցույց տվեցին, որ էլիտայի «անձնական ընտրության սկզբունքով» իրավահաջորդության ու էլիտայի ներսում կոնսենսուսային մշակույթի հաստատման դեպքում տեղի է ունենում էլիտայի վերարտադրություն, այլ ոչ թե՝ շրջապտույտ: Ավելին, վերոնշյալից հետևում է, որ իշխանական իրավունքների և պարտականությունների սուբյեկտը փոխվել է՝ գրեթե առանց նախորդ քաղաքական իշխանությունից տրոհվելու կամ անջատվելու: Վերարտադրվող քաղաքական էլիտայի և ժողովրդի միջև առաջացած «սոցիալական հեռավորությունը» հաղթահարելու ճանապարհն էլ դառնում է իշխանության ղեկի մոտ քաղաքական ուժերի փոխատեղության ոչ համակարգային եղանակը՝ հեղափոխությունը: Վերջինը իշխող էլիտայի կազմալուծման և արդիականացման շարժընթացը փոխելու արմատական ձև է և միշտ չէ, որ պակկվում է հաջողությամբ:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ եթե էլիտան սահմանվում է որպես անձերի գործունակության հետ կապվող երևույթ, ապա շրջապտույտը դիտարկվում է որպես մեկ անձի կամ անձանց խմբի շուրջ իշխանության խճանկարի կայացման գործընթաց: Մյուս դեպքում, եթե հին ու նոր էլիտաները սերտաճած են կամ նոր էլիտան հանդիսանում է հին էլիտայի «անձնական ընտրության» սկզբունքով իրավահաջորդը, ապա շրջապտույտը վերածվում է վերարտադրության կամ իշխանական ուղղահայացը պահպանելու գործողության: Ըստ այդմ, շրջապտույտը արդիականացման գործոն է դառնում այն ժամանակ, երբ քաղաքական իշխանության իրավահաջորդությունը դիտարկվում է որպես անցում և ոչ թե իշխանության պարզ փոխանցում, իսկ էլիտայի փոփոխության վերաբերյալ որոշում կայացնող առաջնային սուբյեկտ է հանդիսանում ժողովուրդը: Հիմք ընդունելով վերոնշյալը, եզրահանգում ենք, որ Հայաստանում ժողովրդավարական անցումը հաջող ավարտելու և քաղաքական համակարգի կոնսոլիդացման ճանապարհին քաղաքական էլիտայի շրջապտույտի բացակայությունը կարելի է համարել ռազմավարական բացթողում: Մրցակցության բացակայության պայմաններում քաղաքական ուժերի ծրագրերի ինստիտուցիոնալ բյուրեղացումը, որը կարող էր իրականացվել պետական կառավարման համակարգի, օրենսդրական գործունեության և սոցիալական ինտեգրման միջոցով, դանդաղել կամ արգելակվել է: Անցումային մյուս պետությունների նման, Հայաստանում էլիտայի շրջապտույտը դրսևորվել է մի գործընթացով, որտեղ էլիտայի ձևավորումն իրականացվել է ոչ թե գործնական խնդիրները ռացիոնալացնելու, ինստիտուտների կայացմանը հասնելու, սերնդափոխության ռազմավարական հրամայականները հասկանալու և արհեստավարժ գործիչների իրավահաջորդությունն ապահովելու միջոցով, այլ ընդհանուր շահերի համաձայնեցմամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Ալթունյան Կ**. Քաղաքական ընտրանու հավաքագրման ձևաչափը, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 1/2020, ՀՀ ՊԿԱ, Երևան, 2020, էջ 226-240:
2. **Parry G.** Political Elites, ECPR, UK, 2005, p. 40-44:
3. **Linz J.** Robert Michels, Political Sociology and the Future of Democracy, by Routledge; 1st edition (July 5, 2017):
4. **Ашин Г.К.** Элитология: история, теория, современность, Монография, МГИМО-Университет, М., 2010, стр. 40-45:
5. **Huntington S.P.** The Third Wave: Democratization in the Late 20th Century (The Julian J. Rothbaum Distinguished Lecture Series Book 4), publ. by University of Oklahoma Press (September 6, 2012):
6. **Ludger Helms**, Leadership Succession in Politics: The Democracy/Autocracy divide revisited, The British Journal of Politics and International Relations, 2020, Vol. 22(2), p. 332:
7. **Голиков А.Г**. Пять цветов китайской власти. политическая элита КНР на рубеже тысячелетий, 2004, стр. 1-11; https://www.academia.edu/:
8. **Панов П.В., Сулимов К.А**. «Преемник» versus «преемничество»: в контексте разнообразия вариантов смены политических лидеров, Власть и элиты / Гл. ред. А.В. Дука. Т. 1. СПб.: Интер социс, 2014, стр. 31:
9. **Fredrik Bynander, Paul ‘t Hart** When Power Changes Hands: The Political Psychology of Leadership Succession in Democracies, Political Psychology, 2006, Vol. 27, No 5, p. 708:
10. **Powell G.B**. Elections As Instruments of Democracy: Majoritarian and Proportional Visions, Yale University Press, 2000, p. 115-120:
11. **Stoner K., McFaul M.** Transition to Democracy: A Comparative Perspective, John Hopkins Univ. Press, 2013, p. 3-8:
12. **Мохов В. П**. Циркуляция элит: проблема критериев процесса // Власть и элиты, М., 2014:
13. **Фисун А**. Постсоветские политические режимы: неопатримониальная интерпретация//ОЙКУМЕНА. Альманах сравнительных исследований политических институтов, социально-экономических систем и цивилизаций. Вып. 2. Осень-Зима 2004. Харьков: Константа, 2004:
14. **Макфол М.** Пути трансформации посткоммунизма, Pro et Contra. Т. 9. № 2, 2005:
15. **GDP and Poverty headcount ratio at national poverty lines** www.data.worldbank.org/country/Armenia:
16. **Քյուրումյան Ա.** ՀՀ պետական պարտքի ազդեցությունը տնտեսության և պետական բյուջեի վրա, Բաց հասարակություն հիմնադրամ, 2016:
17. **Գրիգորյան Ս.** Քաղաքական ինստիտուտների փոխակերպումն ու զարգացումը ՀՀ-ում, Երևան, 2008, էջ 83:
18. **Finocciaro M.A**. Beyond Right and Left: Democratic Elitism in Moscow and Gramsi, Yale Univ. Press, New Haven and London, 1999, p. 17-19:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Շրջապտույտը՝ քաղաքական էլիտայի արդիականացման պայման

Կատերինա Ալթունյան

Հոդվածում ներկայացվել է քաղաքական էլիտայի շրջապտույտի խնդիրը ժողովրդավարական անցման և քաղաքական արդիականացման համատեքստում: Առաջ է քաշվել այն թեզը, որ անցումային ժողովրդավարություններում քաղաքական արդիականացման շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ է քաղաքական էլիտայի անընդհատ շրջապտույտ: Քաղաքական էլիտայի շրջապտույտի հատկանիշների ուսումնասիրությունը կոչված է ծառայելու որպես տեսական հիմք բոլոր այն անցումային ժողովրդավարությունների համար, որոնց ազգային քաղաքական համակարգի արդիականացման խնդիրը գործնական լուծումներ է պահանջում: Այդ նպատակով, հոդվածում քննարկվող խնդիրները փոխկապակցվել են Հայաստանում քաղաքական էլիտայի շրջապտույտի հետ: Հիմնավորվում է այն պնդումը, որ ժողովրդավարական անցման պայմաններում քաղաքական էլիտայի բնականոն արդիականացումը հնարավոր չէ իներցիոն իրավահաջորդության պայմաններում՝ առանց ժողովրդի առաջնային սուբյեկտայնության, ինստիտուցիոնալ բարեփոխումների:

РЕЗЮМЕ

Циркуляция как условие модернизации политической элиты

Катерина Алтунян

Ключевые слова: циркуляция элит, модернизация, демократический переход, преемственность, политическая система, смена власти, народное движение, политическая конкуренция.

В статье рассматривается проблема политической элиты в контексте демократического транзита и политической модернизации. Выдвигается тезис о том, что постоянная циркуляция политической элиты необходима для обеспечения непрерывности политической модернизации в транзитных демократиях. Изучение характеристик циркуляции политической элиты призвано служить теоретической основой для всех транзитных демократий, в которых модернизация национальной политической системы требует практических решений. С этой целью обсуждаемые в статье вопросы были связаны с исследованием процесса модернизации политической элиты в Армении. Обосновывается утверждение о том, что непрерывная модернизация политической элиты в условиях демократического транзита невозможна в условиях инертной преемственности, без первичной субъективности народа и институциональных реформ.

SUMMARY

Circulation as a Condition for the Political Elite Modernization

Katerina Altunyan

Keywords: circulation of elites, modernization, democratic transition, succession, political system, change of power, popular movement, political competition.

The article examines the problem of the political elite within the framework of the democratic transition and political modernization. The thesis statement is that the constant circulation of the political elite is necessary to ensure the continuity of political modernization in transitional democracies. Moreover, the study of the characteristics of the political elite circulation intended to serve as a theoretical basis for all transitional democracies, where modernization of the national political system requires practical solutions. To this end, the issues, discussed in the article, are operationalized also to the political elite of Armenia. As a conclusion, it is inferred that the objective modernization of the political elite in a democratic transition is impossible within the inactive or inert continuity of succession and without the primary subjectivity of the people and institutional reforms.